

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*
ГЕОГРАФИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА РЕСПУБЛИКИ АРЦАХ*



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը կազմում է 11.43** հազ. քառ. կմ, որն ունի խիստ կտրտված լեռնային մակերևույթ: Տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մ:

Հյուսիսից հարավ՝ Լեռնային Ղարաբաղի արևմտյան ամբողջ սահմանով, ձգվում է Ղարաբաղի լեռնաշղթան, որից էլ սկսվում են երկրամասի տարածքով արևմուտքից դեպի արևելք ձգվող մի շարք լեռնաճյուղեր: Հյուսիսային մասով է ձգվում Մռավի լեռնաշղթան, որտեղ էլ գտնվում են Արցախի ամենաբարձր լեռնագագաթները՝ Գոմշասարը(3724մ) և Մռավը(3343մ): Սրանք մտնում են Մարտակերտի շրջանի հյուսիսարևմտյան հատվածի մեջ: Ղարաբաղի լեռնաշղթայում է «Քառասուն աղջիկ» լեռնագագաթը(2828մ), որը գտնվում է Ասկերանի շրջանում, իսկ ավելի հարավ՝ Մեծ Քիրս (2725մ) և Դիզափայտ (2480մ) լեռնագագաթները: Մեծ Քիրսը գտնվում է Շուշիի և Հաղրութի շրջանի սահմանագլխին, իսկ Դիզափայտը՝ Հաղրութի շրջանում:

Հանրապետությունում ամենաերկար գետը Թարթառն (Տրտու) է, որն ունի 200կմ երկարություն և 2650կմ² գետավազանի տարածություն: Մյուս գետերից նշանավոր են Ինջան, Խաչենը, Կարկառը, Խոնաչենը, Վարանդան, Իշխանազետը, Հազարուն, Աղավնո գետը:

Территория Нагорно Карабахской Республики составляет 11.43 тыс.км^{2**}, которая имеет резко изломленную горную плоскость. Средняя высота над уровнем моря составляет 1100м.

С севера на юг по всей восточной границе Нагорного Карабаха протягивается горный хребет, с которого начинаются горные ответвления с запада на восток. В северной части протягивается горный хребет Мрав, там же находятся самые высокие возвышенности Гомшасар (3724м) и Мрав (3343м). Эти горы входят в северо-восточную часть Мартакертского района. В карабахскую горную цепь входит горная вершина Карасун ахчик (2828м), которая находится в Аскеранском районе, а еще южнее - Мец Кирс (2725м) и Дизапайт (2480м). Мец Кирс находится на границе между Шушинским и Гадрутским районами, а Дизапайт в Гадрутском районе.

Самая длинная река в Карабахе - река Тартар (Трту), которая имеет 200км длины и 2650км² речного бассейна. Другие знаменитые реки -Инджан, Хачен, Каркар, Хонашен, Варанда, Ишханагет, Агарун, Агавногет.

*) Աշխարհագրական բնութագրում օգտագործված է Ս. Մելքունյանի «ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» գիրքը, 2005թ.:

В географической характеристике использована книга С.Мелкумяна “Экономическая и социальная география РА и НКР”, 2005г. .

**) Ներառյալ ժամանակավորապես հսկատակորդի վերահսկողության տակ գտնվող տարածքները:

Включены территории, временно находящиеся под контролем противника